Թեստ 4

*1-12-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ*

1. Գաղտնավանկի ը-ն ճիշտ է տեղադրված

   1) խառ(ը)նվածք
   2) մկն(ը)դեղ
   3) հագց(ը)նել
   4) խնդ(ը)րել

   բառում:

2. Բոլոր բառերի բաց թողած տեղերում միևնույն տառը գրվող շարքն է(փակագծերում նշվածներից որևէ մեկը)`

   1) շո...եքարշ, ավա...անի, թա...ուստ (գ կամ ք)
   2) աղ...ամուղջ, ճղ...իմ, խո...կոր (ջ կամ ճ)
   3) ազ...որ, գեր...արել, արժ...որել (և կամ եվ)
   4) արհամար...ել, հեղ...եղուկ, ընդ...անուր (հ կամ -)

3. Հատուկ անունների բոլոր բաղադրիչները մեծատառով գրվող շարքն է`

   1) ԲԱՐՁՐ ՀԱՅՔ, ՔԱՋ ՆԱԶԱՐ, ՏԱՎՐՈՍՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ
   2) ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ, ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ
   3) ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ, ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՇՔԱՆՇԱՆ, ԲԵՐԻՆԳԻ ՆԵՂՈՒՑ
   4) ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ, ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲ

4. Դարձվածքի բացատրության սխալ կա

   1) ձախ գնալ-անհաջողության մատնվել
   2) ծառս լինել-լուրջ դիրք ընդունել
   3) խելքից հանել-խաբել, մոլորեցնել
   4) խոսքը ջուրը գցել-իր խոսքից հրաժարվել

   շարքում:

5. Ածանցավոր բառերի շարքն է`

   1) գյուտարար, բաղադրություն, անբիծ
   2) անդրադարձ, վերջաբան, արևակեզ
   3) կենսունակ, ապուխտ, պատշգամբ
   4) բուրաստան, ախորժակ, մրգեղեն

6. Հոմանիշ բառազույգերի շարքն է`

   1) արևածագ, վաղորդյան, մթնշաղ
   2) փութալ, աճապարել, գալ
   3) արհավիրք, պատուհաս, թախանձանք
   4) հաղթանդամ, թիկնեղ, պարթև

7. Թվականի գրության կամ կազմության սխալ կա

   1) քառանիշորսերորդ, չորրորդ, 5-րդ
   2) տասնմեկերորդ, առաջի, հարյուր
   3) ինննուն, հազարերորդ, 3-ական
   4) երկու-երրորդ, 10-րդ, II -րդ

   շարքում:

8. Հարաբերական դերանուն կա

   1) Ոչ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա:
   2) Դո՛ւ չմրսես ծմռան ցրտում, -բոլո՛րը քեզ...
   3) Ուր էլ լինեմ, չեմ մոռանա երգերը մեր...
   4) Կոխոտի՛ր նրան քայլերով քո լույս...

   հատվածում:

9. Ստորադասական շաղկապների շարքն է`

   1) որպեսզի, եթե, երբևէ
   2) որովհետև, թեև, քանի որ
   3) թեպետև, ինչպես, թե
   4) թե որ, որոնք, սակայն

10. *Երբ լուսաստղը դժգունացավ ու կորավ կապույտի մեջ,...........*

նախադասության քերականական և տրամաբանական շարունակության տարբերակն է՝

1) ծորի բարձր ժայռերը մանրանում են, նոսրանում:
2) օդը մաքուր և թափանցիկ էր լինելու, ինչպես սրբած ապակի:
3) նրա առջև բացվեց անեզր տափաստանը:
4) որ շուտով արևը պիտի ծագի:

11. Մակդիր պարունակող հատվածն է՝

1) Անց են կենում սեր ու խնդում,
Գեղեցկություն, գանձ ու գահ:
2) Կարոտած ականջ է փնտրում
Զարթոնքի հողոտ մի հառաչ:
3) Երազիս մեջ ես ինձ տեսա քո աչքերով,
Քո աչքերով, քո աչքերով ճանաչեցի:
4) Ծով են աչքերը Ջավախքի դըստեր,
Ու կորչում է մարդ նըրա հայացքում...

12. Ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն)

1) Կարոտակեզ հայացք գցելով Լիլիթի օձի պես գալարվող մարմնին Ադամը արագ վազեց նրա հետևից:
2) Դա հանգուցյալի փեսան էր Մարթայի ամուսինը քաղաքում հայտնի առևտրական Իսահակ Մարութխանյանը:
3) Ամրոցի առջև գետի մյուս ափին էր հավաքվել հոծ բազմությունը:
4) Սեղանի գլխին փառավոր բազմոցի մեջ նստել էր ամրոցի տիրուհին:

նախադասության մեջ:

*13-16-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը*

13. Նախադասությունները դասավորի՛ր տրամաբանական հաջորդականությամբ:
Գրի՛ր միայն նախադասությունների համարները:

1. Սակայն գորիլան մարդկանց վնաս չէր պատճառում, ուստի կասկածներ առաջացան, որ նա գազան չէ:
2. Եվ իրոք, պարզվեց, որ նա քսանհինգամյա մի ծույլ երիտասարդ է, որը մտածում էր ոչ միայն մարդկանց վախեցնել, այլև զվարճանալ:
3. Ավստրիայում ձերբակալվեց մի գորիլա, որը մի քանի ամիս շարունակ ահ ու սարսափի մեջ էր պահում երեք քաղաքների բնակիչներին:
4. Զբոսանքի դուրս եկած մարդկանց նկատելով՝ գորիլան դուրս էր թռչում թփերի միջից, ահավոր մռնչյուն արձակում, վախեցնում մարդկանց:

Պատասխան ____________________________________

14. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:

*Բնության հոգեպարար անդորրը հանկարծ խռովվեցին մարդկանց աղեկտուր ճիչերը:*

*Պատասխան* *սխալ է* ________________________

*պետք է լինի* ________________________

15. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՛ր:

Ցավոք, Արամը այն երիտասարդներից է, որ չի լսում ոչ ոքի:

Պատասխան՝ սխալ է ______________________

պետք է լինի ______________________

16. Տրված բառերը տեղադրի՛ր բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների:

Հրաժեշտ ....... նկատեցի մի բան. Լևոնը անհույս .......էր ........, սակայն չէր տեսնում ........ բաժանող անջրպետը:

1. օրիորդ, 2. ինքը, 3. տալ, 4. սիրահարվել)

Պատասխան՝ 1.------------------------------------------ 2.------------------------------------------

3.------------------------------------------ 4.------------------------------------------

*17-32-րդ առաջադրանքները կատարի՛ր ըստ տեքստի*

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

I

1. Դարեր առաջ՝ վաղնջական ժամանակներում, Սևանա լճի տեղում ցամաք է եղել՝ լայնասաղարթ հոծ անտառներով, ծաղկավետ երփնավառ դաշտերով, հուրթի վարելահողերով, իսկ բլուրներին՝ չեն ու բազմամբոխ գյուղեր, որոնց երդիկներից բարձրացող ծուխը հասել է երկինք՝ շուրջբոլորը տարածելով թոնրում թխված հացի անուշ բույրը:

2. Ամենամեծ բլրի տակից ժայթքել է մի հորդառատ աղբյուր՝ ականակիտ ու սառնորակ, որից օգտվելիս գյուղացիները զգուշորեն հանել են ակունքի վրա դրված փակիչը՝ մի ողորկ սալաքար, հետո նորից հարմարեցրել տեղը:

3. Մի օր՝ ծրագալույցին, պանդխտությունից օթևան վերադառնում գյուղաբնակներից մեկը, և տան հարսը, կուժն առնելով, շուտափույթ հասնում է աղբյուրը՝ ծարավից պապակված սևերայրի համար պաղ ջուր՝ բերելու:

4. Շտապելուց մոռանում է փակել առատահոս աղբյուրի ակունքը: 5. Ջուրը ցայտելով դուրս է հորդում՝ հետզհետե ծածկելով շրջակայքը: 6. Երբ այն հասնում է շինականների հյուղակներին, մարդիկ խուճապահար փախչում են: 7. Մի ծեր անդամալույծ, հենված անթացուպին, մի կերպ առաջ է շարժվում և զայրացած նզովում.

--- Քա՛ր դառնա, ով բաց է թողել աղբյուրի ակը:

8. Եվ մոռացկոտ հարսը քար է դառնում, իսկ ջուրը, անընդհատ հոսելով, կազմում է Սևանա լիճը՝ արևից խայտացող հայելանման մակերեսով:

II

1. Լճի անվան հետ կապված ևս մի ավանդություն կա:

2. Ասում են՝ գաղթած վանեցիները վերաբնակվել են Սևանի ափերին՝ որոշելով, թե դա էլ մի Վանա լիճ է:

3. Ցրտաշունչ ու բքառատ ձմեռներին (դրանք այստեղ իսկապես դաժան են) վանեցիները հաճախ էին հիշում իրենց բնօրրանը, նրա փաղաքուշ բնությունը, սեղմածուփ Վանը և դառնացած կրկնում՝ սև Վա՛ն եկավ մեր գլխին,

սև Վա՛ն:

4. Ու այդպես էլ լճի անունը մնում է Սևան:

*17-20-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը*

17. I հատվածի 1-ին նախադասությունից դու՛րս գրիր մեկ անհոդակապ բարդ բառ:

Պատասխան ______________________________

18. I հատվածից դու՛րս գրիր գերադրական աստիճանով դրված ածականը:

Պատասխան ______________________________

19. I հատվածի 1-ին նախադասությունից դու՛րս գրիր սոսկածանցավոր բայը:

Պատասխան ______________________________

20. I հատվածից դու՛րս գրիր *հարթ* բառի հոմանիշը:

Պատասխան ______________________________

*21-25-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ*

21. I հատվածում բացահայտիչ պարունակող նախադասություն է՝

1) 3
2) 5
3) 7
4) 8

22. II հատվածում կապ խոսքի մաս պարունակող նախադասություն է՝

1) 1
2) 2
3) 3
4) 4

23. I հատվածի 7 բարդ նախադասությունը բաղկացած է

1) 2
2) 3
3) 4
4) 5

պարզ նախադասությունից:

24. I հատվածում բացառական հոլովով դրված անորոշ դերբայ պարունակող նախադասություն է՝

1) 1
2) 3
3) 4
4) 8

25. Բաղադրյալ ստորոգյալ կա

1) I. 3
2) I. 8
3) II. 2
4) II. 4

նախադասության մեջ:

*26-29-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը*

26. Գրի՛ր II հատվածից այն բարդ նախադասության համարը, որը կապակցվել է ստորադասական շաղկապով:

Պատասխան ______________________________

27. I հատվածից դու՛րս գրիր ըղձական եղանակի բայը:

Պատասխան՝ ____________________

28. II. 3 նախադասությունից դու՛րս գրիր ժամանակի մակբայը:

Պատասխան՝ ____________________

29. II հատվածից դու՛րս գրիր վերաբերականը:

Պատասխան՝ ____________________

*30-32-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ*

30. Տեքստից չբխող կամ նրա բովանդակությանը հակասող միտքն է՝

1) Սևանա լճի տեղում դարեր առաջ շեն ու բազմամբոխ գյուղերով ցամաք է եղել:
2) Գյուղացիները օգտվում էին բլրի տակից ժայթքող հորդառատ ու սառնորակ աղբյուրից:
3) Պանդխտությունից վերադարձած գյուղաբնակներից մեկը մոռանում է փակել աղբյուրի ակունքը:
4) Ջուրը, անընդհատ հոսելով, կազմում է Սևանա լիճը՝ արևից խայտացող հայելանման մակերեսով:

31. *Շտապելուց մոռանում է փակել առատահոս աղբյուրի ակունքը*

նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

1) *մոռանում է* - բայ, սահմանական եղանակ
2) *փակել* - բայ, անորոշ դերբայ
3) *աղբյուրի* – հասարակ գոյական, սեռական հոլով
4) *ակունքը* – հասարակ գոյական, ուղղական հոլով

32. Երբ այն հասնում է շինականների *հյուղակներին*, մարդիկ խուճապահար փախչում են

նախադասության մեջ ընդգծված բառի կատարած պաշտոնն է

1) տեղի պարագա
2) հանգման անուղղակի խնդիր
3) ուղիղ խնդիր
4) ներգործող անուղղակի խնդիր